


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ («ՆՁԱԿ» ՊՈԱԿ)  
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*Առցանց հանդիպում գրքի հեղինակի հետ*



Հայաստանում գիրք նվիրելու օրվան նվիրված «21-րդ դարի գրադարանավարը որպես տեղեկատվական միջնորդ հեղինակի և ընթերցողի միջև» կարգախոսի ներքո **2022թ. փետրվարի 22-ին՝ ժամը 14:30-ին**, ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում ZOOM հարթակում տեղի կունենա հանդիպում գրքի հեղինակի հետ:

Միջոցառման նպատակն է կարևորել գրադարանավարի դերակատարումը որպես տեղեկատվական միջնորդ՝ գրքի մասին հանրությանը տեղեկացնելու, նոր հրատարակությունների վրա ընթերցողների ուշադրությունը հրավիրելու և երիտասարդության շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նկատառումներով:

Գրադարանավարի առաքելությունն է կապող օղակ հանդիսանալ հեղինակի և ընթերցողի միջև, կարողանալ նպատակային ուղղորդել տեղեկատվական հոսքերը ընթերցողների նախասիրություններին համապատասխան:

Միջոցառումը նախատեսված է գրադարանների ներկայացուցիչների և հետաքրքրված այլ անձանց համար:

ՀՀ Ազգային արժեք հանդիսացող Բյուրականի աստղադիտարանի 75 տարվա պատմությունը ներկայացնող «Բյուրականի աստղադիտարան. ակնավոր նվաճումների 75 տարին» նոր հրատարակված արժեքավոր գիրքը մասնակիցներին կներկայացնի Բյուրականի աստղադիտարանի տնօրեն և գրքի գլխավոր խմբագիր Արեգ Միքայելյանը:

Գիրքը բաղկացած է գիտական և տեղեկատվական մասերից. ներկայացված են Բյուրականի աստղադիտարանի 75-ամյա պատմությունը և հիմնադիր, 20-րդ դարի խոշորագույն գիտնականներից մեկի՝ Վիկտոր Համբարձումյանի կենսագրությունն ու գործունեությունը, 2,6 մ, 1մ Շմիդտի համակարգի և այլ աստղադիտակները, 1946-2021թթ. Բյուրականի աստղադիտարանի կարևորագույն գիտական արդյունքները, նվաճումները և այլ հետաքրքիր նյութեր:

Միջոցառմանը կցուցադրվի կարճ տեսահոլովակ, որտեղ ներկայացված է Բյուրականի աստղադիտարանը իր ողջ հմայքով, իսկ մտքերի փոխանակման ժամանակահատվածում գրադարանների մի շարք փորձառու ներկայացուցիչներ իրենց տեսանկյունը կներկայացնեն միջոցառման կարգախոսի համատեքստում:

Վերջում հեղինակը վեբինարին մասնակցած գրադարաններին կնվիրի իր գիրքը:

Zoom հանդիպման տվյալները՝

Meeting ID: **409 64 91060**

Password: **1JHuj**

Խնդրում ենք ձեր մասնակցությունը վերինարին հաստատել հետևյալ հղմամբ՝

<https://forms.gle/B4ufxVoQ8eqhp99q8>

Հարցերի դեպքում դիմել՝ հեռ. 011-238747, էլ. փոստ՝ [adasarg@innovcentre.am](mailto:adasarg@innovcentre.am), [adasarg@mail.ru](mailto:adasarg@mail.ru)

Միջոցառման ֆեյսբուքյան հղում՝ <https://www.facebook.com/SciTechlibraryNCIE>

Գիտատեխնիկական գրադարան

<https://www.facebook.com/SciTechlibraryNCIE>

<https://twitter.com/InnovCentre>

<https://www.linkedin.com/in/scitech-library-of-ncie-1141881ab/>

[https://www.instagram.com/scitechlibrary\\_ncie/](https://www.instagram.com/scitechlibrary_ncie/)